Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2022 թվականի օգոստոսի 29-ից սեպտեմբերի 3-ը Ինդոնեզիայի Հանրապետություն գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Ռուստամ Բադասյան

Արման Պողոսյան

Հարություն Ազգալդյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ինդոնեզիայի Հանրապետություն (Բալի), օգոստոսի 29-ից սեպտեմբերի 3-ը

4. Հրավիրող կողմը՝

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկատվության փոխանակման գլոբալ ֆորումի քարտուղարություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

2022 թվականի սեպտեմբերի 1-ից 2-ը Բալիում կայացել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկատվության փոխանակման գլոբալ ֆորումի «Ասիայի նախաձեռնության» անդամների երկրորդ բարձրաստիճան հանդիպումը: «Ասիայի նախաձեռնությունը» մեկնարկել է անցած տարվա նոյեմբերին, Հայաստանը

ստորագրել է «Ասիայի նախաձեռնության» հռչակագիրը ս.թ. օգոստոսին: «Ասիայի նախաձեռնությունը» կենտրոնացած է հարմարեցված լուծումներ սահմանելու վրա՝ ապահովելու համար հարկման թափանցիկության ՏՀԶԿ ստանդարտների ներդրումը ամբողջ Ասիայի տարածաշրջանում:

Հանդիպմանը մասնակցել են «Ասիայի նախաձեռնության» հռչակագիրը ստորագրած ենթադատությունների ֆինանսների և հարկային ոլորտների բարձրաստիճան ղեկավարներ: Հայաստանի իրավասու ներկայացուցիչների մասնակցությունը Նախաձեռնությանը և Նախաձեռնության անդամների հանդիպմանը կարևոր է ՀՀ կառավարության 18.11.2021թ. թիվ 1902-Լ որոշման հավելված 1-ով հաստատված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի» 6-րդ կետում սահմանված միջոցառումների (6.1, 6.2, 6.3) և ՀՀ կառավարության 12.12.2019 թ. թիվ 1830-Լ որոշման հավելված 1-ով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարության» 2.2.3, 2.2.5, 2.2.10 գործողությունների իրագործման, ինչպես նաև ՀՀ և ՏՀԶԿ գլոբալ ֆորումի միջև ձևավորված սերտ համագործակցության ամրապնդման առումներով: Քանի որ Նախաձեռնությունը նոր է և դրա համագործակցության ձևաչափն ու գործունեության բնույթը որոշվում էին հանդիպման ընթացքում, հատկապես կարևոր էր ՀՀ իրավասու ներկայացուցիչների մասնակցությունը նշյալ հանդիպմանը:

6. Քննարկված թեմաները՝

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկատվության փոխանակման գլոբալ ֆորումի «Ասիայի նախաձեռնության» երկրորդ բարձր մակարդակի հանդիպումը անցել է «Աջակցություն վերականգնմանը հարկային թափանցիկության բարձրացման միջոցով» խորագրի ներքո: Հանդիպման ընթացքում մասնակիցները քննարկել են Նախաձեռնության իրականացվելիք աշխատանքների ոլորտները, Նախաձեռնության անդամակցության ընդլայնման հարցերը, հարկման

թափանցիկության ՏՀԶԿ ստանդարտների ներդրման ընթացքը և հիմնախնդիրները: Փոխանակվել է մասնակիցների փորձը ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկատվության ավտոմատ փոխանակումն արդյունավետ դարձնելու, արտասահմանյան ֆինանսական հաշիվների կամավոր բացահայտման սխեմաների և իրական շահառուների հաշվառման համակարգեր ստեղծելու և մի շարք այլ խնդիրների վերաբերյալ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպման ընթացքում մասնակիցների առջև ելույթ է ունեցել ՀՀ ՊԵԿ նախագահ Ռ. Բադասյանը՝ Հայաստանի Հանրապետությունում իրական շահառուների հաշվառման համար օրենսդրական բազայի ձևավորման փորձին նվիրված շնորհանդեսով: Հարավային Կորեայի, Ճապոնիայի, Հնդկաստանի պատվիրակությունների հետ առանձին հանդիպումների ժամանակ քննարկվել են երկկողմ համագործակցության և հնարավոր տեխնիկական աջակցության հիմնահարցեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ընթացքում մասնակիցները համաձայնեցրել և ընդունել են «Ասիական նախաձեռնության» աշխատանքային ծրագիրը, որը ներառում է երկու խումբ գործողություններ. հիմնարար գործողություններ՝ բոլոր անդամների համար, և լրացուցիչ գործողություններ, որոնց մասնակցում են շահագրգիռ անդամներն ըստ ցանկության:

Հանդիպման արդյունքներով որոշվել է 2023թ.-ին Նախաձեռնության շրջանակներում կազմակերպել մի շարք մասնագիտացված միջազգային ուսումնական միջոցառումներ: Նաև որոշվել են մի շարք կազմակերպչական բնույթի հարցեր, այդ թվում՝ Նախաձեռնության անդամների հաջորդ տարվա հանդիպման ժամկետներն ու վայրը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հանդիպմանը մասնակից երկրների հարկային մարմինների ղեկավարների հետ ձեռք են բերվել պայմանավորվածություններ՝ երկկողմ համագործակցության և տեխնիկական աջակցության ծրագրեր իրականացնելու վերաբերյալ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

06.09.2022թ.